

- H = Վենետ. Միսիթ. Մտնդրն. Թ. 197 Զ. (Սարգիսեան, Յուցակ, էջ 823—830)
- I = " " " 198 " (" " " " 831—834)
- J = Սեբ. Ս. Նշան Վանքի " 3 " (Գուշակեան, Յուցակ, " 7)
- K = British Museum, Codex 7 (Conybear, Catalogue, " 9—10)
- L = " " " 8 (" " " " 11—12)
- M = Bibliotheca M Laurenziana " 15 (Maclear, Notices եւ այլն, 1913, էջ 41)
- N = " Ambrosiana " 4 (" " " " 1913, " 8)

Հ. Ա. ՊՈՐԴԵՆԵԱՆ

ՅՈՒՆԵԲՈՆ ԴՊՐՈՑՔ

ԵՐ

ԵՐԵ ԶԱՐԳԵՑՄԱՆ ԾՐՁԱՆԱԿԵՐԸ

ՆԵՐԱՖՈԽԹԻՒՆ

(Շարունակութիւն:)

§ 6. Յունաբան լըսու առաջնահամակարգութեանը, որպէս մշակութարարութեան երեւէ ժամանակաշրջան: — Յայտնի է արդէն, որ յունաբան եւ ոսկեգարեան երկերը լեզուական ու քերականական տեսակէտից սյնքան միմեանցից տարբեր են, որ առանց գծուարութեան զանազանում ու բաժանում են իրարից:

Այս հանգամանքը վաղուց ի վեր օգտագործուել է իրբեւ կարեւոր մի միջոց բանափական ու ժամանակագրական որոշ հետախուզումների ու հետեւ թիւնների համար:

Ոսկեգարեան գրաբարի մանրազնին ու սումմասիրութիւնը ցցց է տուել, որ այդ լեզուն, լինելով ըստ եռութեան նշնը, ըստ իր ոճի ու կերպի բաժանում է այլ եւ սյլ դասերի¹: Որքան եւ առանձին գեպքերում գծուար ու վեճելի լինի այդ խմբերի ու նրանց առանձնայատկութիւնների որոշումը, սակայն դասերի ու խմբադրումների ընդհանուր փաստը միանգամանաւոր է ու անժխտելի:

Յունական գրաբարը մինչեւ այժմ գեռուսումմասիրուած չէ եղել համեմատական ու նոյն մանրազնին եղանակով, ինչպէս ոսկեգա-

¹ Տե՛ս Հ. Ա. Այսունեան, Քնն. քեր., Հ. Թ. Թոռնեան, Հատընակիր քննթերուածք եւ Ն. Բիւզանդացի, Կուրին վարդապետ:

րեանը: Մինչդեռ, ինչպէս կը տեսնենք, այդ ուսումնասիրութիւնը կարեւոր է ոչ միայն լեզուական, այլ եւ բանափական եւ մատենագրական պատմական տեսակէտից:

Քննութեան առնելով յունաբան հնագոյն երկերի լեզուն, քերականութիւնը եւ բովանդակութիւնը, կարելի է ոչ միայն բաժանել այդ լեզուն տարբեր խմբերի եւ պարզել նրա զարդացման ընթացքը, այլ եւ որոշել արտաքին գրոց առանձին խմբերի թարգմանման ժամանակաշրջանները եւ նյոյն խոկ առանձին երկերի թարգմանման ժամանակագրական յաջորդականութիւնը:

Յունաբան լեզուն իր բառավորեցով ու քերականական առանձնայատկութիւններով, ինչպէս կը տեսնենք, մի եւ նյոյնը չէ եղել արտաքին գրոց զանազն խմբերում, այլ նա կադմուել է աստիճանաբար ու յաջորդաբար, հետզհետէ կրել է զգալի փոփոխութիւններ եւ ունեցել իր զարգացման յատուկ ընթացքը:

Յունաբան հնագոյն թարգմանութիւններում լեզուական խմբաւորումները շատ աւելի որոշ ու ակներեւ են, քան ոսկեգարեան գրաբարում, որովհետեւ հիմուած են ոչ թէ ոճի ու կերպի, այլ, գլխաւորապէս, քերականութեան ու արուեստական բառակազմութեան բացայաց տարբերութիւնների վրայ:

Համեմատական ուսումնասիրութեան եղանակով երեւան են գալիս միանգամայն անյայտ նոր փաստեր, որոնք հիմովին յեղաշրջում են աւանդական հին կարծիքները յունաբան թարգմանութիւնների մասին: Պարզում է, օրինակ, որ Դաւիթ Անյաղթին վերագրուած իմաստափական մեկնութիւնները ոչ միայն բոլորն ել թարգմանութիւն են յունաբանից, այլ եւ տարբերութեան եւ տարբեր հին վարդապետ համար մատենագրական ու

թարգմանների գործ են եւ ծագել են դաւա-
նաբանական վէճերի ժամանակ կրօնական տար-
բեր միջավայրերում: Մի մասը նրանցից թարգ-
մանուած են միաբնակ հայերի, իսկ միւս մասը
երկաբնակ հայերի միջավայրում:

Հուսաբանուում են ուրիշն թէ յունաբան
Դպրոցի ծագման ու զարգացման մաթ ու Խրթին
ինտիրը եւ թէ վեցերորդ ու եօթերորդ դարերի
գրական երկերի ժամանակագրութիւնը, որ
մինչեւ այժմ՝ եղել են անլուծելի մի առել-
ծուած: Եթէ նոյն այս ուղղութեամբ, որին հե-
տեւել ենք մենք, լինեն նոր հետազոտութիւն-
ներ, թւում է ինձ, որ վերջնականապէս կը պար-
զուի նաեւ վեցերորդ ու եօթերորդ դարերի
կրօնա-եկեղեցական մատենագրութեան զար-
գացման ընթացքը եւ մեր մատենագրութեան
պատմութիւնը կը դրուի վերջապէս հաստատուն
հիմքերի վրայ:

§ 7. «Արտադին էր ու վերբերել ա-
զիսականութեան բարեկանութիւնը և առա-
ջակայ իմ ուսումնասիրութիւնը, որ լիս է տես-
նելու «Հանդէս Ամսօրեայն ի էջերում», բաժա-
նուած է լինելու երկու գլխաւոր մասերի՝
Դաւիթ Անյաղթին ու Էլիասին վերա-
գրուած մեկնութիւնների հեղինակները եւ
Բ. Յունաբան հնագոյն թարգմանութիւն-
ների երեք տարբեր շրջանները:

Աշխատութեանս կցուած է լինելու իրբե-
տաւելուած:

Ե. Էջմիածնի մատենագրանի իմաստա-
սիրական հնագոյն ձեռագիրների ցուցակը:

Ցուցակի հրատարակութիւնը կարեւոր
համարեցի, որովհետեւ ուսումնասիրութեանս
հիմք են ծառայել յաճախ ոչ թէ Դաւթի Եր-
կերի վենետիկում լիս տեսած բնագիրը, այլ
էջմիածնի մատենագրանի հնագոյն ձեռա-
գիրները: Վենետիկի հրատարակութիւնը հնա-
գոյն այդ ձեռագիրների համեմատութեամբ
ունի պակաս մասեր եւ որոշ տարբերու-
թիւններ:

Ուսումնասիրութեանս առաջին մասը, որ
վերաբերում է իմաստասիրական մեկնութիւ-
ների հեղինակների որոշմանը, կարեւոր է, զլիսա-
լուապէս, բիւղանդական մատենագրութեան
պատմութեան համար: Հեղինակների որոշման
սիրութեամբ հայերէն մեկնութիւնների ուսումնա-
գրութեամբ ստացում են եղանակացութիւններ,
որոնք հիմնական մի քանի կէտերում տարբեր-
ում են տիրող կարծիքներից, որ լուգունելու-

թիւն են գտած փիլիսոփայութեան պատմու-
թեան մէջ:

Ուսումնասիրութեանս երկրորդ՝ աւելի
ընդարձակ ու հիմնական մասը՝ վերաբերում է
թէ այդ մեկնութիւնների եւ թէ յունաբան
հնագոյն այլ թարգմանութիւնների ժամանա-
կագրութեանը եւ կարեւոր է առանձնապէս
հայոց մատենագրութեան պատմութեան հա-
մար: Այս մասը, յոյս ունեմ, որ իւր ուրոյն
բովանդակութեամբ եւ իւր բազմաթիւ ուշա-
գրաւ ու անակնկալ եղանակացութիւններով նոր
ընթացք ու նոր ուղղութիւն պիտի տայ յունա-
բան մատենագրութեանը վերաբերեալ լեզուա-
գիտական ու բանասիրական յետագայ ուսում-
նասիրութիւններին:

Ուսումնասիրութեանս այս երկրորդ մասի
մէջ բացի Արխտատակելի երկերի ու նրանց վե-
րաբերեալ հնագոյն մեկնութիւնների թարգ-
մանութիւններից, քննութեան են առնուածնաեւ
արտագին գրոց, միւս թարգմանութիւնների
ու երկերի մեծագոյն մասը՝ Դիոնիսիոս Դրակա-
ցու քերականութեան թարգմանութիւնը, նոյն
քերականութեան հնագոյն մեկնութիւնները,
Փիլինը, Պիտոյից Գիլլը եւ Կոնոսու, իսկ կրօնա-
կան բովանդակութեամբ երկերից՝ Իրենէսու,
Տիմոթէոս կուզի հակածառութիւնը եւ Գիլլ
թղթոցի յունաբան հնագոյն թղթերը,

Եթէ աշխատութեանս հիմնական սկզբունք-
ները եւ եղանակացութիւնները հանութիւն
գտնեն, թւում է ինձ, որ գժուար չպիտի լինի
որոշել այնուհետեւ նաեւ կրօնական եւ այլ բո-
վանդակութեամբ յօւնաբան միւս հնագոյն
թարգմանութիւնների խմբակցութիւնը եւ ժա-
մանակը: Սրանք եւս, իմ կարծիքով, լնչպէս
երենէսու ու Տիմոթէոս կուզի թարգմանութիւն-
ները եւ Մովսէս քերմողահօր ու Յովհաննու
Նպիսկոպոսապետին վերագրուած թղթերը, լե-
զուական իրանց առանձնայատկութիւններով
միանալու են, հաւանաբար, մեր մատնացցց
արած յոնաբան երեք իմբերից որեւէ մէկի
հետ, որոնց ժամանակը որոշուած է սոյն ուսում-
նասիրութեան մէջ:

Ուսումնասիրութեանս մէջ կան կէտեր,
որոնց լուսաբանութեան համար հարկաւոր էր
ձեռքի տակ ունենալ գրքեր եւ հրատարակու-
թիւններ, որ, գժբախտաբար, ինձ մատչելի չեն
եղել: Այդ կէտերը, յոյս ունեմ, կ'աշխատեն
պարզել Երոպայում գտնուող բանասէրները,
որոնք հնարաւորութիւն ունեն օգտուելու եւ
բովանդական հարուստ գրադարաններից:

Դաւիթ Անյաղթին ու Էլիասին վերագրուած մեկնութիւնների հեղինակները:

§ 8. Արեւադրելէ իսաւունիքան երթիք, Պար-
իւր շներածանիւնան և Նըւց Աբրամիւնիւն-
իւններէն հայրէն Երէտանունները: — Արիս-
տոսելի կամ Նրան ընծայուած երկիրից թարգ.
մանուած են Հայերէն եւ Հրատարակուած են
Աննետիկում¹.

— 408. Առողջութեանք (շարդարակ), էջ 359

Է. Յաղացս մեկնութեան (περὶ ἐρμηνείας),
էլ 461—486:

τ. Ψωτομονάθην *γραλωσυ* αշխար'չի (περὶ χόσμου), έξι 603—628.

Պարփիւրի երկերից թարգմանուած է՝
Ե. Ներածութիւն (εἰσαγωγή), էջ 227—
250, որը նորպղատոնական դպրոցներում կազ-
մում էր՝ սրբազնութիւնի անհրաժեշտ ու անանջատ
մասը, իրբեւ սկզբանութիւնի Ստորոգութիւնն
Արխատանելի է:

Բացի այս բնագրերից թարգմանուած են
նաև վերցիշեալ երկերին վերաբերուղ հե-
տեւեալ մեկութիւնները:

մ. Վերլուծովթիւն՝ Երածովթիան Պար-
փերի դաշտի փիլտրովայի Երգինացւց (Անե-
ալ 1833, էջ 251—356).

β. Οι πορηταὶ μέθικες οἱ φίλοι σόφους.
μανεωλὶ τὸ μὲν εἰπεῖν τὰ μέτρα, τὸ δὲ περὶ τὴν θεοῦ 1833,
τὸ δὲ 409-458, συνεπερέεν τὸν αὐτὸν ρετόντας εἰς.

1 Կորիւն Վարդապետի, Մամբէէի վրձանողի եւ
Դիմի Ընյալթի մատենագրութիւնը, Աննեալկ 1833:
2 Աւերսիլեալ Հինգ երկերի հայերէն թարգմանու-
թիւնները Քր. Խոնիքիլը համեմատել և յունարէն բնա-
գրերի հետ Բացի այդ նա Ստորոգութեանց եւ Յաղագո-
մենց, թեան հայերէն բնագրերը որորից հրատարակել եւ 8
հեռագրերի համեմատութեամբ, ամեն առաջ առաջ
Օքսֆորդ 1894:

1892: *Anecdota Oxoniensia*,
§ 182. Κλ 80-94, ήτη έξι 95-218 π.ν.ψ. φερνακήρ.
Σχολία σύν θεῷ εἰς τὴν εἰσαγαγῆν Πορφυρίου ἀπὸ φωνῆς
Δαβίδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου.

Դ. Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մեկնութիւնը զորեցատան գլխոց Երիտաստելի ի Վերլուծականն, անդ էջ 557—598, յունարէն բնագիրը գտնուած չէ:

Ե. Մեկնութիւն Ստորոգութեանց Արհստութէլի ընծայեալ Էլիսասի իմաստասիրի, Ա. Պետրոսով 1911, էջ 1—137.

Այս թարգմանութեան յունարէն բնագիրը պահպանուել է և Հրատարակուած է՝ տես Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis categorias commentaria, edidit A. Buse, Berolini 1900, էջ 107—255. յունարէն վերնագիրն է՝ Ἐξήγησις σὺν θεῷ τῶν δέκα χατηγοριῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφίλεστάτου φιλοσόφου: Յունարէն բոլոր ձեռագրերում Ստորոգութեանց այս մեկնութեանը վերագրուած է Դաւիթ փիլիսոփային: Սակայն յունարէն բնագրի հրատարակիչն Ադոլֆ Բուսսէն, Տիֆոնելով որոշ փաստական տուեալ ների ու դիտողաթիւնների վրայ, հաւանական է համարել, որ այս մեկնութեան հեղինակը ոչ թէ Դաւիթն է, այլ նրա ուսուցիչ էլիհասը:

Ն. Հատուած ինչ մեկնութեան Ստորոգու-
թեանցն Արխտոտէլի, աես Էլիասի Ստորոգու-
թեանց մեկնութեան իմ հրատարակութեան վեր-
ջում, Ս. Պետերբուրգ 1911, էջ 140—149.
յունարկն մնագիրը գտնուած չէ:

Բացի վերոյիշեալ վեց մեկնութիւններից
թարգմանուած է նաեւ՝

Է. Դաւիթ Գիլբոսփայի Պրօլեցիոնա տղի
Փըլօսօփիա երկը, որի հայերէն վերնագիրն է
ըստ Վենետիկի հրատարակութեան (1833, էջ
120—216): «Դաւիթի եռամեծի եւ անյազմ
Գիլբոսփայի ընդդէմ առարկութեանցն չորից
Պիհունի իմաստակի եւ սահմանի եւ տրամատու-
թիւնք իմաստաւիրութեան»: Հնագոյն հայ ձեռա-
գիւների վերնագիրը մօտաւորապէս համապա-
տասխան է յունաբէնին՝ «Դաւիթի Գիլբոսփայի
Ներգինացւոց՝ յառաջարանք սահմանաց իմաս-
տասիրութեան»¹.

Սան Թարգմանութեան յունարէն բնագիրը հրատարակուած է՝ սես Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentatorum, edidit Adolfus Busse, Berlin 1904, էջ 1—79. յունարէն վերնագիրն է. Տա προ-

¹ Տես կղմանի մատենադարձնի թ. 1889 և 1890
ձեռագրելը (= Կարին, 8ու ցակ, թ. 1847 և 1848):

լեշօմενα տղէ գւլօօօգիաց ձո՞ գանցէ Ճաթօծ շօս
նօսփիլեստանու չա մօսքօրոնոց գւլօօօգիու:

Դաւիթ Անյաղթին վերագրուած են նաեւ
մի քանի իմաստասիրական-մեկնական մանր հա-
տուածներ, ինչպէս՝

ա. Նորին դաւմի փիլսոփայի առածք
հինգ, Ախետիկ 1833, էջ 217—222.

բ. Նորին զան բաժանման, անգ, էջ 223
—224.

է. Ընդ այսուիկ եւ առաջիկայ բան իմաստ-
նոյս, Ամենայն չար տանըելին եւն, անգ,
էջ 215—216:

Ակրեւ յիշուած բոլոր մեկնութիւնները,
ինչպէս ցցց եմ տուել դաւիթ Անյաղթի իւլ-
իւրը Նոր լուսաբանութեամբ, հետաղտու-
թեանս մէջ¹, թարգմանուած են յունարէնից:
Այդ Մեկնութիւններից նորպատոնական դա-
փիթ մեկնիչ աշխատութիւններ են Սահմանքը
կամ աւելի ճիշտ՝ Յառաջարանքը, եւ Պոր-
ֆիրի Ներածութեան վերլուծութիւնը, իսկ միւս
մեկնութիւնների հեղինակներն անորոշ են ու
վիճելի, ուստի եւ այդ ինդիրը կարօտ է ուսում-
նասիրութեան:

§ 9. Դաւիթ Անյաղթին ու նրա երեք համա-
կանքին ելլակացութեանները: — Դաւիթ Ան-
յաղթի ինդիրը նոր լուսաբանութեամբ, աշ-
խատութեանս մէջ յաջողուել էր ստանալ հե-
տեւեալ եղբակացութիւնները, որ միանգամայն
տարրեր էին տիրող ենթադրութիւններից դա-
փիթ Անյաղթի մասին.

ա. Սահմանք իմաստասիրութեան երկը,
Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը եւ
Արիստոտելի Վերլուծականքի մեկնութեան հա-
տուածը² միեւնցն հեղինակի՝ դաւիթ փիլսո-
փայի գործ են, իսկ Արիստոտելի Յաղագս մեկ-
նութեան, եւ Ստորոգութեանց, հայերէն մեկ-
նութիւնները դաւթիւնը չեն.

բ. Նորպատոնական դաւիթ մեկնիչը հայոց
մատենագրութեան մէջ շիրթուած է դաւիթ
Հարբացու հետ, ինչպէս եւ Բիւղաղականում՝
Niketas David Paphlagonի հետ.

չ. Սահմանք իմաստասիրութեան երկը եւ
Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւն-
ները թարգմանուած են յունարէնից.

դ. Նորպատոնական դաւիթ մեկնիչը Աղե-
քանդրիայում ուսած Զ. դարի մատենադիր է.

¹ Աղարշապատ 1904, արտապատ, «Արարտա» ամ-

առարից 1904, Փետրուար, Յունիս, Յուլիուս:

² Վերլուծականքի մեկնութեան հատուածը կարող է դաւիթինը լինել, աեւ այդ աշխատութեանը մեջ էլլա մասին օտար գրչի:

է. Նորպատոնական դաւիթ մեկնիչը քրիս-
տոնեայ է.

շ. Կանոնին վերագրուած առասպելարա-
սական մեկնութիւնների հեղինակը դաւիթ մեկ-
նիչը չէ:

Այս եղբակացութիւնները, ինչպէս ինձ
համոզել են յետագայ իմ հետաղտութիւնները,
ընդհանուր առմամբ, ուղեղ պիտի լինեն, բացի
մի քանի կէտերից, որոնց մասին առանձին խօսք
կը լինի ներբեռում:

Դաւիթ Անյաղթի մասին այնուհետեւ լոյս
էր տեսել Մ. Խոստիկեանի գերմաներէն աշխա-
տութիւնը¹, Բոլոր գրեթէ վերցիշեալ կէտերում

Մ. Խոստիկեանի եղբակացութիւնները նոյնն են,
ինչ որ իմ աշխատութեան մէջ՝ Նա եւ Դաւ-
թին համարում է կրտսեր Ալբագիոդորոսի աշխ-

կերտ, վեցերորդ դարի հեղինակ, կարծում է մի-
այն, որ Դաւիթը, հաւանաբար, ոչ թէ քրիս-
տոնի մեկնիչ է, այլ հեթանոս: Ինչպէս յայտնի
առնեայ մեկնիչ է, այլ հեթանոս: Ինչպէս յայտնի

է, ԱԴ. Բուսէն դաւիթի քրիստոնեայ լինելը
Նյուպէս հաւանական էր համարել, հիմուելով
յունարէն բնագրի որոշ հատուածների վրայ²:

Մ. Խոստիկեանը ենթագրում է, որ դաւիթի թէ
յունարէն եւ թէ հայերէն բնագրում այդ հատ-
ուածները կարող են լինել յետագայ ժամա-
նակների յաւելուները: Դաւիթի հեթանոսը լինելու:

Հաւանական մինչաննա համարում է նրա Ներա-
ծութեան մեկնութեան մէջ՝ ոնց ընթացութիւն
քրիտոնոց, դարձուածքը (Busse, էջ 121, 21),
որ հայերէնում թարգմանուած է «օգնակա-
ռութեամի լաւագունին» (Ախետիկ 1833,


էջ 281): Ընդունելով հանդերձ, որ «Լաւա-
գունին» գործ է ածուած այստեղ Աստուծոյ փո-
խարէն Պղատոնի բարձրագոյն «Խղէայի», իմաս-
տով, թւում է ինձ այնու ամենայնիւ, որ գրանով

ապացուցում է միայն դաւիթի քրիստոնէու-
թեան նորպատոնական ու զնոստիկեան բնյութը:
Դաւիթի քրիստոնեայ լինելու նշանները, որ մատ-

ուաթի քրիստոնեայ լինելու նշանները, որ մատ-
ուացցց են արուած ԱԴ. Բուսէն եւ իմ աշխատու-
թիւններում, դժուար է առանց լուրջ հիմքերի
մերժել, համարելով բոլորը միասին օտար գրչի
յաւելուածները: Մ. Խոստիկեանի առարկութիւն-
ներն այս կէտում, իմ կարծիքով, համօղեք չեն:

ՊՐԻՒԱՆ: ՊՐՈՊ. Յ. ՄԱՆՈՆԴԵՆ

(Ծայրանակելիի):



1 Dr. Missak Khostikian, David der Philosoph, Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte, Band LVIII, Bern 1907:

2 Տէ՛ս A. Busse, Davidis Prolegomena ե. ն., էջ VI: